



Ստեփանն Սօջեանց եւ բեռնակիր եղինս չորս, մինչ կա՛մ էր մեզ ըստ ամենայնի յուզի անկանիլ՝ գլխաւոր սոցա հանդերձ երկու ընկերօքն զորս էառ ընդ իւր՝ ի խնդիր մատեաւ առ Կարապետ վարդապետն առ ի օժանել զհրապտեայ խաչն. ի յո՛չ առնուլն նորա յանձն՝ երկրորդէր եւ երրորդէր զաղերս իւր կարի թախանձանօք, ուստի եւ հարկեալ նորա կատարեաց զնոյն ըստ օրինի եւ յաւարտիլն հրաւիրեաց ի համբոյր զնոսա զամենեսին, այլ նոքա ըստ օտարածէս զաւանութեան իւրեանց միմիայն խոնարհական շնորհակալութեամբ ամփոփեալ զիւրեանց բաւականութիւն, հրամայեցին վարձկանացն բառնալ եւ ելանել. ճանապարհ կալեալ մեր յարեւմտից կուսէ հազիւ հազ կարացաք երեկոյել ի քարածածուկ վայրի ինչ առ ստորոտիւ լերինն, ուր բաց ի ճանապարհորդական բազմաչար տառապակրութեանցն, զգիշերն ողջոյն բա՛ց աչօք հսկէաք ի պատճառս տեղւոյն անյարմարութեան եւ սառնամանեացն ցրտութեան: Յառաւօտուն պահու յաւուր հինգչաքաթի չեւ մեր առեալ զքաղցրութիւն արեգին, հրամայեցաւ մեզ ամենեցուն ի գլխաւորէն թողուլ անդէն առ ետեղք զամենայն ծանրութիւնս՝ եւ հարկաւորօքն միայն շատացեալ ելանել ի վեր, ընդ այնպիսի զառիվեր, յոր հազիւ ուրեմն հափսթերս մխելով մարթանայաք անձնազատ մերձենալ ի տեղի ինչ զիւրայարմար եւ ձեռնամերձ՝ ընդ որ սակաւ ինչ հեշտանայր հողի եւ սիրտ եւ մարմին ի մարմանդ հանգստութեան ապահովանային, յետ փոքրամիջոց անցից մերոց առ այն, զէս եղեւ մեզ համբուրել զստորոտս ձիւնաթաղ լերին եւ առ այն զզնացս ի վեր բարձրացուցանել, ուր այո՛ զօրութիւն մարդկային տկարանայր ի հնարից, եթէ չէր օգնեալ մեզ մայրենի շնորհ մերոյն Մասեաց, այն զի տեղի տուեալ նորա քաղցրագութ զրկանաց իւրոց եւ ընդարձակեալ մեզ զնազելի խաղաղութիւնն ընդդէմ զառնախոռով բռնութեան հողմոց, ա՛յնպէս հրաւէրս եւ շնորհս մատուցանէր լեւալ մերոց սրտից, ա՛յնքան հանգարտիկ ի վեր տանէր զմեզ ի հայրենին մեր զաւառ, մինչեւ զողջե՛ս առ բարձրութեամբ լեռնակուտակ ձեանցն սաստկութեան եւ առ տարածութեամբ տեղւոյն բարձրութեան, քաղցրաբարիկ իմն իբրեւ ի վերայ հեշտալի դալարի վայրուջ ի վեր ձեմել մեզ յերկնաբարձ եւ ի նախնին մեր քա-

ղաք. մշտնջենաւորութիւն այսր լեռնազնացութեան ձգիւր մինչեւ ժամս վեց. եւ յընդմիջել աւուրն, հազիւ ուրեմն զիպաւոր հանդիպէր ելանել մեզ ի լեռնամէջսն, ոչ աւելի ինչ հեռի քան զնոյն իսկ կատարն, ուր մինչ տարածամութիւն աւուրն ի բաց տանէր ի մէնջ զիւրն օժանդակութիւն, եւ շրջապատուն ամպոց թօթափելոց տազնապս կասկածելիս ի մէջ բերէր, ա՛յր իւրաքանչիւր ի սկսուած անդր ածապարել փութայր եւ զվերադարձն իւր յառաջարկէր, առ որ շնորհս գտեալ ի գլխաւորէն՝ բոլորեցաք ի վայելս հացկերութի եւ իբրեւ ամենայն ոք առնոյր զիւր յազուրդ, անդէն ի նմին տեղուջ հրամայէր գլխաւորն ընդ մեզ եկելոց գիւղականաց բրել խորափոխս ինչ չափաւոր իմն խորութեամբ, ուր կառուցեալ զսուրբ խաչն եւ շնորհաւորեալ միմեանց զանվտանգ մեր զօրծանութիւն, վերադարձաք ի տեղի մեր՝ ուր իջեանեալ էաք յաւուրն չորեքչարթի եւ գիշերեալ անդէն նովին առաջնաճաղի զառնութեամբ, ի միջօրէի ուր բաթ աւուր հանդիպեցաք սուրբ ուխտի ընակութեան մերոյ վանիցն Յակոբայ, ուր թուի տակաւին յամիլ սոցա մինչեւ ցշաբաթս երիս: Յայսմ ամենայնի նպատաձեռն լինէր մեզ առաջնորդութիւն պարոն Ստեփաննին Սօջեանց, ուր յառաջընթացն քան զամենեսին էր նա ինքն եւ մերս նուաստութիւն: Բարձրութիւն եւ իայնութիւն լերին տակաւին չեւ են ի չափ արկեալ:

Այլ արդ՝ ո՞ տացէ ինձ բան եւ բարբառ ի դէմս բերել զհրաշալեացն եւ զգեղեցկութեանցն մերոյն Մասեայ, ո՞ ուխտեացէ պարգեւել ինձ նպատաս՝ շնորհիւ անցանել առ վայրօք հանգստեան նախնեաց մերոց հարց, ուր զեռես չի՛ք գտեալ ումեք եւ զոր բնաւ չեն տեսեալ մինչեւ ցայսօր աչք որդեգրացս. երկին կրկին, ուր նախնին մեր զիտէր զամենայն աշխարհ եւ ուր վերստանայր զիւրն զաղար, անդ՝ ուր զուարճանայր հողի իմ յերկիւղալից ցնձութեան եւ ուր ամենայն ոսկերք իմ ի խնդութեան պարարէին՝ համբուրեալ զտեղի հայրենի ընակութեան իմոյ, անդ՝ ուր զառնութիւն ի հեշտութիւն փոխարկեալ, եւ ծանրութիւն ի թեթեւութիւն, երկօքին տեսութիւնք մի զմիմեամբ ելանէին ի սիրալի տեսիլ զարմանահրաշ գեղոյ նորա. ո՛հ՝ կարեմասել թէ՛ որպիսի խորին իմն մտահոգութիւն անդէն ի միտս իմ սաստկանայր. եւ զի՛արդ զետեղիւր յանձն իմ զարմացունս

անհնարին իբրեւ ի թեւս թեթեւ վերամբարձեալ առ փափագելին յամենայն աղագաց. աւա՛ղ՝ ո՞ւր արդեօք յայնժամ աչք արդոնեան, ո՞ւր արդեօք անդէն հողի եղեկելեան, եւ ո՞ւր արդեօք այժմ լեզու տարսոնեան՝ որ զամենայն ելեւէջս, զբարձրութիւնս, զտարածութիւնս եւ զանհամեմատ վերամբարձութիւնս նորին լիաչափ կշռանօք ի բան, ի ճառ վերածեցէ, ուր աչք իմ եւ ի ներքին յուզմանց խորհրդոց յարտատու համակեալ, զբարձրեալն Աստուածփառաւորէին: Ո՛չ կարէ հողի իմ միւս անգամ տեսանել զա՛յն վայելչութիւն, զոր ետեան, եւ ո՛չ լեզու իմ զօրէ պատմել զոր ընկալան, եւ ո՛չ գրիչ իմ ճառել, զոր վայելցիցին աչք իմ: Յայսմ անբաւականութեան, նա՛ միայն տացէ՛ բաւականութիւն եւ հաստատութիւն ամենայն սրտից՝ որ անհնարինս գրէր մինչեւ ցայսօր զի բարձրութիւն անդր նորա վերելունս. եւ որոյ է բարձրութիւն լերանց եւ ծով եւ ամենայն ինչ:

Յաւել քան զայս՝ ենթարկեալ զիս խորին խոնարհութեամբ ի խնամս ձերոյ Հայրութեան մնամ ամենախոնարհ ծառայ

Սաշատուր Անտօնեան Ապովեան:

1829, Սեպտ. 21:

Ի վանս սրբոյն Յակոբայ:

Առ բարձր արժանապատիւ Յովսէփ բազմահանճար վարդապետն եւ կալալեր. կառավարիչ սրբոյ Մայր աթոռոյն ամենայն Հայոց ի սուրբ էջմիածին:

Ի 23 Սեպտ. ստացեալ:

Գթառատ Հայր

Ողորմած Տէ՛ր.

Շտապաւ պատահեալ ելանելն իմ աստի, չկարեմ ամենայն հանգամանօք զրել զբարեյաջող անցան՝ որք կայսերական ոլորմութեամբ ուրախ արարին զթախճաղին վերձակ իմ: Բաւակա՛ն է քաջախոհ մտաց Ձերոյ սրբութեան միայն այս պատճէն հրամայարի Նորին պայծառափայլութեան Գրաթ Պատգեւիչին Երեւանի առ զինուորական քաղաքապետն վասն իմ, զայն ամենայն զուրբ ինքնին իմաստասիրեալ կարէք այսու ուրախ

առնել զբարեացակամ սիրտ Ձեր՝ որ ցանկայ յաջողութեան իմոյ միշտ եւ միամտացուցանել զամենայն բարեկամս նաեւ զթշնամիս իսկ: Ես զուրով ճանապարհորդ տարադէտ՝ զճանապարհորդիս հայեցից տարադէտ՝ ելցե՛ն աղօթք ձեր մաքրագինք եւ պաշար՝ ելցե՛ն աղօթք ձեր մաքրագինք եւ պաղատանք արփիանչոյ(1)ք առ Ամենապաղատանք արփիանչոյն՝ օգնահայեաց ակնարկութիւն բարձրելոյն՝ օգնական լինել տկարութեան իմում ի ճանապարհս օտարս եւ յերկիրս անձանօթս: Մշտնջենաւորեացի՛ աղաչեմ անխղճի հաստատութեան հայրենի շնորհացդ առ իս եւ ի միտ տացէ ածել զէթ երբեմն

զչնչին ծառայ Ձեր զՍաշատուրս Ապովեան:

1830, Յուլիսի 10, ի Տփլիս:

Թարգմանութիւն

Պատճէնի հրամանադրի Նորին Պայծառափայլութեան Գրաթ Պատգեւիչին Երեւանի առ վոյեյնից Գուբերնատորն Տփլիսոյ Ստեփան Ստեփանիչ Ստրեկալովն:

Ըստ յայտարարութեան զերազանցութեան Ձերոյ ի 10էն Յունուարի անցեալ ամսոյ համար 217, ես մատուցի Տեառն Մինիստրի Հասարակաց լուսաւորութեան կենեալ Լիվեանայ ի մասին ընդունելոյ ի Համալսարանն Գերպոտոյ զառաջնորդին Պրոֆեսոր Պարրոտին ի լեռն Արարատ զպատանի Սաշատուրն Ապովեանց ի Հայ ազգէ, զի ուսցի անդ վարժապետ անուամբ արքունի ծախիւք:

Այժմ Մինիստրն լուսաւորութեան կենեալ Լիվեանայ յայտարարութեամբ իւրով ի 25էն Մարտի համար 2466 ճանուցանէ ինձ թէ ըստ ազգելոյ իւրոյ զայսմանէ թաղաւոր կայսերն, Նորին կայսերական Մեծութիւնն զերամբարձ հրամանաւ հաճեցաւ հրամայել, որպէս արկանել զԱպովեանն ի Գերպոտ երեք ամիս ժամանակաւ՝ սահմանելով վասն ամիսայ փառանակաւ նորա տարին 200 մանէթ տարեկան պիտոյից նորա տարին 400 ոտուրի արծաթ դրամ. եւ ի ծախոյս ճանապարհի նորա ի Թիֆլիսէ ի Գերպոտ եւ վերադարձի նորա յետ աւարտելոյ ուսմանն 400 ոտուրի արծաթ դրամ. բաց յայսմանէ առ ժամանակ մի վասն հողալոյ իւրոյ զուսուցանական պէտս՝ 100 մանէթ արծաթ դրամ, յարելով եւ զայս՝ թէ արդէն իսկ հրամայեալ է Հայ



